

ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ԴՐԱՄ ԿԱՄ ԲՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՈՒՂՁԵԼ ԱՌ
ՏՃՈՐԻՆՈՒՔԻՆ ԵՆՈՐ ՕՐ ԲԱԳՐԻ
ԳԱՀԻՐԷ

Direction du journal
NOR-OR
Caire

Ձեռագիրներն ետ չեն դարձուիր,
ԱՐՏՕՆԱՏԷՐ Ժ. ՄԻՒՆԻԷ

ՆՈՐ ՕՐ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ ԴՐՇ. ՈՂՁ
Գահիրէի հ.ամար վեցամսեայ 20
» » Երամսեայ 12
Շրջակայից » վեցամսեայ 25

ԱՐՏՕՆԱՏՎՈՒՆ ԶԱՄԱՐ
Վեցամսեայ Ֆրանկ 7

ԲՈՒՍԻՈՑ ԵՒ ԿՈՎԱՍՏԻ ԶԱՄԱՐ
Վեցամսեայ Բուրքի 3

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆԻՅՔ Է
ԵՒ ԲՂԹԱՍԱՐԻ ՇԱԽԲԸ
Խմբագրութեան վրայ է

ՆՈՐ ՕՐ
ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳՐԱՍԻՐԱԿԱՆ ԱՎՈՒՄԲԻՆ
Պ. Ս. ՓԱՓԱԶԵՆԻՍԻ ստորագրութիւնը
չը կրող «ՆՈՐ ՕՐ» ի ընկալագիրները
անվաւեր կը նկատուին:

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՊԱԳԱՆ

«Նովոյէ Վրէմիա» լրագիրը քաղաքական աշխարհի ուղը հրատարակելու գիտական ինդուստրիալ կրթութիւնը

«Յուսարի է որ տէրութիւնները չը կրցան օգտուիլ այն մասնագործիւններէն և դժուարին կացութիւնէն որոնց մէջ կը գտնուի Անգղիա» Հարաւ-Աֆրիկէի պատերազմին պատճառաւ առիթը բարեկամներ չէ՞ր թիթէ կարգադրելու համար ամէն հայրենի Յայտի է թէ, այսօր Անգղիա ստիպուած չը պիտի կրնար 200,000 զօրքերու բանակ մը նաւ դնել այս կամ այն կողմ յարձակում մը ընելու համար:

«Արդ, եթէ տէրութիւններու կողմէ սպառնացուէր եգիպտոսէն ելլելու Անգղիա պիտի հարկադրուէր ելլել որովհետեւ իր նաւատորմը հաւասարակշիռ ըլլալէ հետի է երկու ուրիշ միացած տէրութիւններու նաւատորմիդին, և թէ, բաց աստի, իր մարտանաւները պիտի ստիպուին պահպանել իր ծովընդերը, որոնք արշաւանքի մը դէմ պաշտպանուելու վիճակին մէջ չեն»:

«Նովոյէ Վրէմիա» կարծիքը ճիշդ չենք կրնար ընդունիլ:

«Նովոյէ Վրէմիա» անձանսթ ըլլալու չեն այն պատերազմները զոր Անգղիա մղած է 1882էն այսինքն եգիպտոսի գրաման թուականէն ի վեր:

Վիզիտուիա թագուհոյն գահակալութեան օրով Անգղիայի քառասուն պատերազմ տեսցած են, որոնց ծր տեղի ունեցան նոյն իսկ եգիպտոսի զբաւառման վերջը: Տէրութիւնները կըրնային օգտուիլ այդ պատերազմներէն զոր մղեց Անգղիա 1885ին Պիրմանիոյ, 1890ին Հարաւ-Աֆրիկէի, 1893ին Չեդդարի, 1896ին Սուտանի, 1897ին Աֆրիկայի գէմալի թուանսթ վախ արդի պատերազմին չափ ծանր

րակշիռ եղած չեն Անգղիոյ ծովային և զինուորական սլոք տկարացնելու առտիճան, բայց նկատուածն արժանի կէտ մը կայ թէ՛ այդ թուականներուն Անգղիոյ դիրքը եգիպտոսի մէջ շատ անշուք էր բազմաամսայ օրուան Տէրութիւնները չօգտուեցան, որովհետեւ ինչպէս գրած էինք «Նոր-Օր»ի անցեալ թիւով, օտար տէրութիւնները շտտոնց բաժնած ըլլալով իրենց մէջ Աֆրիկէի ծանօթ սահմանները, գրեթէ ինչոքոյ նիւթ թողուցած չեն հոն, եթէ կան եգիպտոսի և Թուանսթի խնդիրները, անոնք ալ գրեթէ Անգղիոյ պահանջին կողմը անցուցած են:

Անգղիայի ինչ որ ըրին եգիպտոսի մէջ 19 տարուան ժամանակամիջոցին, օտար տէրութեանց եգիպտոսի ներկայացուցիչներուն աչքին առջև ըրին ինչո՞ւ այդ ներկայացուցիչներէն մին կամ միւսը չը բողբոջին անգղիական ձգտումներուն դէմ: Չէին կրնար բողբել, որովհետեւ դիւանագիտական դահլիճներու մէջ լրջօրէն հոգածութեան աւարկայ եղած չէր եգիպտոսի խնդիրը: Եթէ կային թերթեր ալ մեկ համող իբրև կուսակից եգիպտական շահերու, անոնք ալ յուսահատած դահլիճներու ըլլածնէն քաշուեցան ասպարեզէն:

Ու՛ր են չենք տեսներ ոչ «Ժուռ» նալ էմիփսիինը որ այնքան կատաղօրէն կը յարձակէր Ալպիոնի վրայ, ոչ ալ «Մօայա» որ իր կրօնամոլ քաղաքներով ժողովուրդին զայրութիւնը կը գրգռէր ընդդէմ Անգղիայուց:

Անգղիական եգիպտոսը՝ 1882ի եգիպտոսը չէ՛ ա՛լ. առենք եգիպտական զբօշակի տակ երթեկեղ խտիվական շոգենաւները այսօր Բրիտանական դրօշակին տակ կը ճամբորդեն, իբրև սեպհականութիւն անգլիական ընկերութեան: Կառավարութեան երկաթուղիներու վարչութիւնը անգլիացի նախկին զօրավարներու ձեռքը յանձնուած է, և շատ հաւանական է որ, ինչպէս կը խօսուի, օր մը երկաթուղիներն ալ ծախսուին անգլիական ընկերութեան մը, սրան համար 25,000,000 սուկուր գումար մը կ'որոշեն Մայրաքաղաքին միջնաբերդը որ պահուած են ուսովմութեամբ, անգղիացի զօրքե-

րուն հսկողութեանը տակ է: Ներքին, երկնտական, հանրօգուտ, կրթական, արդարութեան գործոց նախարարները թէպէտեւ եգիպտացի են, բայց ասանք ո և է որչափ չեն կրնալ տալ առանց խորհուրդ հարցնելու և հաւանութիւնը առնելու իրենց խորհրդակալներուն որ անգլիացիներ են, որովհետեւ իւրաքանչիւր նախարարութիւն իր անգլիացի խորհրդակալներուն Սիրտարը որ եգիպտոսի սպարապետն է, դարձեալ անգլիացի մըն է, արդի Ուինկլթ փաշա, յաջորդ Բիչնըրի Տամետակ և աւելի անգլիացի զինուորական փաշայներու վոխարէն մի միայն երկու զինուորական փաշայներ կան եգիպտացի:

Ձինուրական, բժշկական, վարժարաններու ուսուցչական տարրը մեծաւ մասամբ անգլիացիներէ կը բաղկանայ: Բաց աստի Միջազգային դատարաններու ջնջուելու հաւանութիւնը ու նրմանորինտի պարագայներ այնպէս նըմարել կուտան թէ եգիպտոսի ապագան աւելի Անգղիոյ կը պատկանի քան թէ եգիպտացիին: 1882ի մանուկը այսօր իր քառամսեայ բոլորած է, և թերևս հետի չէ այն օրը որ պիտի տեսնենք պարզուած անգլիական դրօշակը իր մշակած արտին վրայ:

ԲՈՒԹՈՒՄԻ ԶՆՈՒԹԱՆՑ ԲԱՆԳԱՐԱՆԸ

Երկու տարի է ի վեր Հարաւ-Աֆրիկեան փոթորկայող պատերազմը կը տեւէ, այդ երկար ժամանակամիջոցին ոչ որ հետաքրքրուեցաւ երկրին հնութեանց թանգարանին վրայ:

Պ. Լ. Շառքանթիլէ վերջապէս կուգայ զվեզ լուսաբանել իր մէկ շահեկան թղթակցութեամբը, «Մաթէն»ի վերջին թիւին մէջ տպուած, և ուրկէ կ'ամփոփենք հետեւեալ ծանօթութիւնները ոչ նուազ շահեկան:

Բուրքիոսն ալ ունեցած է իր հնութեանց թանգարանը, թէպէտ և հոն չենք տեսներ ոչ ճարտարութեամբական ոչ ալ պատմական մեծ հնութիւններ, բայց կը տեսնենք այնպիսի սուրճիւններ որոնց ունեցած նշանակութիւնը շատ մեծ է:

Այդ սուրճիւններուն էն գլխաւորն է Մանսցու Ընթրիփին չգիրքը:

Մագումով ֆրանսացի Պօէր մը Բիէ անուամբ՝ Անգղիական հալածումներէն ձանձրացած, կը թողու իր բնակատեղին և կը քաշուի երկրին խորքը, զէպի Չուլունսերու կեդրոնը:

Հոն առաջին աթիւ ձեռք կը բերէ ագարակ մը՝ ուր ինքը, կինը ու զաւակները ձեռք ձեռքի տուած կ'աշխատին և կը հերկեն օրն ի օրն: Բիէի ագարակին կարծր բերքերն մին էր կորեակը, որուն կարկանդակը այնքան մեծ հաճոյքով կը ճաշակէին Չուլունսերը:

Օրին մէկը Չուլունսեր խմբովին կը յարձակին ագարակին վրայ, Բիէն բռնելով ձեռուններէն կը կապեն, ու կը հրամայեն իր կնոջը որ ինչոք մը պատրաստէ իրենց կորեակէ կարկանդակէ, առանց մեղքը մոռնալու:

Բիէի կինը վտանգին առջև վարժուած, կուսկելով որ այդ առաջակները ինչոքով մը չը պիտի բաւականանային, մինչև որ չը թալկէին իրենց ագարակը ու չը սպաննէին գիրենք, շուտ մը կը պատրաստէ պահանջուած ինչոքը, որ Բիէի և ընտանեաց փրկութեան բանային պիտի ըլլար:

Կինը կարկանդակին մէջ փոխանակ մեղրի կը լեցնէ առատ թոյն ու աղոր մը շինելէ շտկուելէ վերջը սեղան կը հրամայէ: Չուլունսերը առաջին պատասխան տննքը մէկ գետին կիցնան, ու կը մեռնին:

Կինը ագարակէն վերջը իր ամուսինը, կը պատրաստէ փոս մը որուն մէջ կը թաղէ մեռեալ Չուլունսերը: Ասոր վրայ շինուած է Մանսցու Ընթրիփին գիրքը:

Սուրճիւններուն երկրորդն է՝ Նաւակ մը անցեալ դարէն, զոր 1795ին գրած է Պօէր մը իր կնոջը, մասնասիշ ընկող անգլիական հալածումները:

Միւզէին սրահին դրանը առջև կը տեսնուի առիւմ մը, աչքերը սեռած սիւհին միւս կողմը դրուած պատկերի մը վրայ որ փրուկէտ է: Այդ առիւմին Բրիտանական Առիւմ անունը տրուած է:

Վ Ր Ի Պ Ա Կ

«Նոր-Օր»ի անցեալ թիւով «Իզմիլեան Սրբազան» վերնագրին տակ հրատարակուած յօդուածին մէջ «Այլապէս»-ի վեցամսեայ կանխիկ պահանջը գրուած էր սխալմամբ, փոխանակ «Այլազեան Սրբազան»-ին առաջին գործը եղաւ իր Առաջնորդութեան ընտրուած օրէն մինչև եգիպտոս եկած օրը բանած ամիսները իսկ պահանջել, բուն մը որ տարօրինակ թուեցաւ ամիսուն»:

Խ. ԶՈՂՐԱՊ
ԱՅՎԱԶԵԱՆ՝ «ՆՈՐ-ՕՐ», ՄԻՋԱՊԵՊԻ
Ա Ռ Թ Ի Ի

Ահաւասիկ Միջ. վերաքննիչ աստի փաստարան Տ. Խ. Զոհրապի գրութիւնն ինչպէս որ խոստացած էինք:

Սիրելի փափազեան
Զարմանքով կ'իմանամ թէ՛ տեղոյս Հայոց ազգային Առաջնորդարանը, զայրացած Ձեր «Պատասխան մը» վերնագրին տակ հրատարակած յօդուածէն որ կը քննադատէր Առաջնորդարանի վարչական գործերը, բողոքած է Ձեզ դէմ փաստաբանաց կաճառին և Միջազգային վեր. ատենի ընդհ. դատախազին:

Շատ ուզեալ ըլլալու է, պարտօսի գործերուն մասին հաւատարմութեամբ փաստարան մը կրնայ համար տալ իր անհատական կեանքին և գործերուն վրայ, ըլլայ Միջազգային ընդհ. դատախազին, ըլլայ փաստաբանաց կաճառին որոնք և է իրաւասութիւն չունին մեր վրայ, ի բաց առեալ այն հսկողութեանն սրուն իրաւունք ունին միմիայն փաստաբանական արուեստին կիրառման ընթացքին մէջ գործուած արարքներու, և այնպիսի արարքներ որ ըլլան արատաբեր փաստաբանի մը պատուին:

Եթէ Ձեր յօդուածը նախատական է, որն որ չէ, բազմաթիւ դատարաններու դուռը բաց է, որոնք միայն իրաւասութիւն ունին զարժանն անօրինի այսպիսի պարագայներու մէջ:
Ինձ կը թուի թէ Առաջնորդարանը չարամիտ խորհրդականներէ թեւադրուած է:

Միթէ աւելի նախամեծար չէ՞ր որ խեղդէին այն ազմուկը որ պարծաւ Ձեր յօդուածին շուրջը քան թէ գիմէին ծայրայեղ միջոցներու:

Ու աւելին կայ. Առաջնորդարանի այսքան վրդովումը ու իրարանցումը մասնաւոր ազատ քննադատութեանէն կրնայ մեղմութիւններու տեղի տալ:
Անշուշտ քննադատական յօդուածներու հեղինակները հայածելով չէ որ կրնան հանդարտեցնել հանրային կարծիքը, այսպիսի վարմունք ուրիշ ժամանակներու և ուրիշ երկրներու արուած է: Կ'երեկ թէ ուրիշ երկրներու սովորութիւնները հոս ալ սպրդեցնել կ'ուզեն:

Ձեր քննադատութիւնները փոխան զարմացում պատճառելու, հաճոյք պէտքէ պատճառած ըլլային Առաջնորդարանին: Քննադատուել յարձակուով կրել, կը նշանակէ թէ քննադատողը խոտելի տարր մը չէ: Հաստատութիւն մը որքան կարևոր ըլլայ, նոյնքան քննադատութիւնը մատչելի կըլլայ հոն:

Քննադատութեան խոստիւելու միակ միջոցն է՝ ըստ կարելոյն կարող և բանպէտ տարրով օժանդ հաստատութիւն մը, պատրաստ ամէն ծանր պատասխանատուութիւն տանելու:

Օ, և աւելի հայերու մէջ է ուր Առաջնորդարանները նշանակելի կարեւորութիւն ունին. հոն կրօնական և

բազմաթիւն ժողովները անսահման իրաւասութեան տէր են որ կը լուծեն ժառանգութեան, կտակի, ամուսնալուծութեան նման խնդիրներ: Ահազին գործ վարչներուն համար: Այսպիսի պաշտօններու կոչուող անհատները ինչպիսի յատկութիւններով օժտուած ըլլալու չեն ուրեմն: Ինչպէ՛ս քննադատար չըլլար անոնց ներկայութիւնը երբ իրենց պաշտօնին կոչումը չունին: Այո՛, այս մարգարէն չնչին գործերը պէտք է որ հսկուին ու քննադատուին միշտ ու անաշտօրէն:

Առաջնորդարանը վայր մընէ որի դուռը ժողովրդին պէտք է բաց ըլլայ, ուր հանրային կարծիքը ազատօրէն պէտք է մուտք ունենայ: Աղքատները սփոփել, ազգային դատարարութեան հոգ տանել, ժողովրդի արտունջներուն զոհացում տալ, ասոնք պէտք է ըլլան Առաջնորդարանի մը հոգիները: Առաջնորդարան մը պէտք է որ փակէ սրբավայրի մը դռները որի խորանին առջև երկու սերտեր կը բաղձան յաւերժական հաւատարմութեան ուխտը կատարել ու անպարտ զերդաստաններ կազմել:

Ի, յայտէ՛ս, քմահաճոյք և դժուճ շահախնդրութիւն պէտք է փտարուած ըլլան այդ նուիրական յարկէն: Ուրեմն երբ այս էական յատկութիւններէն մին կը պակաս, քննադատութիւնը հոն է անհրաժեշտօրէն անաշտ, քննադատութիւնը հոն որքան կ'ու լեզուաւ գրուած ըլլայ, կ'արժէ:

Վարուելու այս եղանակները ընդունուած ըլլալու են այն ազգերու կողմէն որ սարուկ ազգեր չեն կոչուիր: Քննադատութեան չը հանգուածի, յետադէմ ու անհաշտ հոգի ունենալ կը նշանակէ:

Ահա թէ ինչու՞ զարմանք կը պատճառեն ինձի Առաջնորդարանին դիմումները, այնքան ծիծաղելի, որ ըլլուած են Ձեզի դէմ:

Գրութիւնս վերջացնելու պահուն աւելաբը չեմ համարել Ձեզի յիշեցրենի լապտիկէտէ հետեւալ խօսքերը.
«Ձը զայրանանք այն մարդկանց դէմ՝ որ անիրաւուն են ու գոռոզներ, անոնք որ միմիայն իրենց անձը կը սիրեն ու ուրիշները կը մոռնան, այս կարգի մարդիկներ ի ծնէ այսպէ՛ս ըստեղծուած են. անոնք չեն կրնար կամենալ որ քարը ինկնայ ու կրակը վեր բարձրանայ»:

Խ. ԶՈՂՐԱՊ

ԵԳԻՊՏՈՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԸ
ԻԶՄԻՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ՕՐՈՎ

Բ.
(Կեր Աւեոնի միջպատկը)
Եզրպատի Տ. Ղևնդ բաճն. ծանր յանցանք մը գործած ըլլալով Իզմիրեան սըրբազան, իբր եկեղեցոյ եպիսկոպոս և իբր առաջնորդ միճակին՝ փրքնազարկ կ'ընէ յանցարար բաճնայն. բայց սա՛ Պոլիս իր ազգեցիկ բարեկամներուն շնորհիւ սատրիսարքին դիմում կ'ընէ և անոր աջակցութիւնը կը խնդրէ: Պատրիարք սրբազանը՝ Պոլիսի երեկի մեկնծ տղայի խնդրերը չուզելով մերժել՝ պատրիարքական փոխնորդը (Տ. Գեորգ Տ. վ. Թեթեան), իրեն կը կոչէ և կը հրամայէ անմիջապէս հեռագրել Իզմիրեանի որպէս

զի յանցարար բաճնայնի դարձեալ ի պաշտօն կոչէ:—Բայց Իզմիրեանը չէր ծանշար, Սրբազան հայր, կը պատասխանէ իւթիւծեան, նա Ձեր գիտցածներէն չէ, այսպիսի նախապիւք մը չը համբերեք:—Թէ որ զու կը վախճաւ հեռագրելով՝ ուղղակի ևս կը հեռագրեմ, կը գոչ պատրիարքը և հեռագրեր կատայ: Երեկոյեան դէմ կը հասնի պատասխանը, կարի լսկոնական—Ստացայ Ձեր հիտազերը, պաշտօնէս հրաժարած եմ—Իզմիրեան:—Ս. Պատրիարք (Աշքեան) ատոր վրայ իբր կ'անցնի. փոխնորդ, վարչութիւն, ամենքը ի ժողով կը կոչէ—«Ինչ պիտի ընենք»—փոխնորդը իր վրէժը լուծածի պէս՝ «Ես Ձեզի չըմ որբա...»—Ճանրմ, ու՛ֆ, հասկեցանք, հիմա սա՛ նախինք, ինչ պիտի ընենք...—Ինչ պիտի ընէք, պէ՛տք է հիմա հեռագրել որ բաճնայնի գործը բարոյութիւն իր սնորհալութեան կը թողուք—Ե: ճիշտ այս իմաստով հեռագիր մը կը յղուի Իզմիրեան սրբազանի, որով նորին գերապատուութիւնն ալ հրաժարական ետ կ'անէ:

(Մեծնիխ եւ Իզմիրեան)

1890 թուականին, մինչ Իզմիրեան սըրբազան իր պաշտօնատեղին կը գտնուէր՝ օրհնութեան գիր մը գրած էր հապէշաց Մեծնիխ Բ. Թագաւորին (*): Յաջորդ տարին՝ Մեծնիխ Թագաւոր օսիլի խաչ դրկեց նորին գերապատուութեան (**): Հանգրեճ արքայական հրովարտողով: Սրբազանին օրհնութեան գիրը հայերէն էր. իսկ արքայական հրովարտողը՝ հայերէն (***):

(Ազգեանի կտակը)

Իր պաշտօնավարութեան միջոցին Իզմիրեան սրբազան կարեւոր խնդր մ'ալ ըստեղծած է—Աշքեան կտակը:

Աշքեան Յակոբ Էֆէնտի, եզրպատիկ մեծահարուստ ազգայնիք, 1889ին իր հի-

(*) Եզրպատի ազգայնիք հոգեւորական իր նետ աւետարակաւ յարաբերութեամբ մէջ են. Եզրպատի միջն և հապէշիստամ առ Ուուզմ երկու ամիս կը տեւէ, զի ճամբաները շատ անպիտան, աւազուտ, քարուտ ի մի քան դժուար են: Հակառակ այս դժուարութեան՝ առևտուրը շահաւոր է. բայց այս կէտ վայրենի երկրին քմահաճոյցը զոն չըմնելու համար մեր ազգայնիքները հարկ է անոնց հետ ըստեղծութեան կապ մը հաստատել. այս տեսակետով Իզմիրեան սրբազան օրհնութեան գիրը գրեց իրենց թագաւորին. յայտնի է թէ հապէշը քրիստոնէսի եւ իր.Ոնց եկեղեցի մը չէր հաստատել եկեղեցոյ դաւանութիւններէն:

(**) Մեծնիխ Թագաւորի այս խաչը՝ կարելի է տեսնել Նորին Գերապատուութեան պատկերում:

(***) Մեծնիխ Թագաւորին թագաւորը հոպէշ մ'էր որ սթանքելի կերպով կը գրէ ու կը խօսի ո՛չ միայն հայերէ՛ս՝ այլ մէկ երկու եւրոպական լեզուներ: Գահիրէցի զեպրոս Կարապետեան ամուսն ազգայնիքը այս մարդը տղայ հասակէն իր խնամոց տակ առնելով Ս. Երուսաղեմայ վանքը ընդկած էր որ ուսում՝ առնէ. Երուսաղեմայ ժառանգաւորաց վարժարանին մէջ իւր շըրջանը աւարտելով՝ Գահիրէ վերադարձաւ իւր պաշտպանի թով. միևնոյն ատեն զեպրոս Կարապետեան վրդովի հապէշուցի մ'ալ որդագրած և Գահիրէի հայոց վարժարանին մէջ կը թրթօ էր զամի. երբ հապէշ և հապէշուցի չափահաս եղամ Կարապետեան զամնը իրարու հետ ամուսնացուց հայ եկեղեցոյ ծէսով, պայամաւ որ միշտ Գահիրէ մնան. յետոյ հապէշը «հայրենիք» մէջ մը տեսնեմ զամի ըսելով ելաւ հապէշիստամ զմաց. հոն, հապէշաց թագաւորը իւր ազգակիցներէն ասամի ուսեալ մարդ մը գտնուում վրայ ուրախ՝ զամի իւր թով պահեց իբր թագաւոր. իսկ խեղճ հապէշուցի տակաւին Գահիրէ կը մնայ, ամուսնոյ մը վերադարձին սպասելով...:

անպատեղի գարնանը համար Պոլիս և կամ ու Գատրգիւղ վախճանած է, և մարմինը, ըստ կտակի, Երուսաղեմ փոխադրուած ու հոն ամփոփուած է:

Իզմիրեան սրբազան նոյն տարին իր անձնական տկարութեան պատճառաւ Պոլիս կը գտնուէր, և ինք խօսեցաւ հանգուցեցին զամբանականը, յորումի մասնաւորի յիշեց թէ իր առած տեղեկութեանց համեմատ հանգուցեցալ կարեւոր կտակ մը ըրած էր ազգին:

Իզմիրեան սրբազան երբ Եզրպատի վերադարձաւ՝ փոխաց այս կտակին վրայ մասնաւորութիւններ ստանալ. հանգուցեցալ տեսական հպատակ էր և հիւպատոսարանը պաշտօնական ազգով կը յայտարարէ թէ ժառանգորդը պարտին մինչև վեց ամիս դիմի հիւպատոսարանին և իրենց իրաւունքներուն տէր ըլլալ, ի լրանալ պայման համար՝ ո՛ր և է բողոք կամ դիտողութիւն նկատողութեան չպիտի առնուէր. ատոր վրայ Իզմիրեան սրբազան պաշտօնատեղէն հիւպատոսին կը ծանուցանէ թէ Աշքեան կարեւոր կտակ մը ըրած էր ազգին և անոր պատճէն կը խնդրէ հիւպատոսարանէն. այս պաշտօնագրին պատասխան չը տրուիր. սրբազանը երկրորդ գիր մ'ալ կը գրէ, որուն հիւպատոսը կը պատասխանէ թէ կտակը քննուած է՝ բայց հայոց սեպական ո՛ր և է տրամադրութիւն չկայ անոր մէջ: Ատոր վրայ Իզմիրեան կը դիմէ տեղական դատարանին, զի ամբողջ կտակին մէկ պատճէն ալ ըստ օրինի տեղական կառավարութեան պէտք էր հարգողուած ըլլալ: Գատուորը արդարև կը հաստատէ թէ պատճէն մը կայ իւր քով, բայց զայն ձեռք բերելու համար 140 եզրպատ. ոսկոյ ծախք մը եղած է, ուստի եթէ սրբազանը կուզէր անպատճառ հայոց վերաբերեալ մասը ձեռք բերել՝ պարտ էր այդ գումարին կէսը, 70 եզրպատ. ոսկին վճարել զատարանին: Սրբազանը այն տան կը դիմէ նախարարապետ Նուպար փաշային և անոր շնորհիւ ձրի ձեռք կանցունէ Աշքեանի կտակին պատճէնը, որու հաստատութիւնը ի ստորի կ'ամփոփենք:

Հանգուցեցալ եօթը կտոր կարուած վազը՛ ըրած է հարիւր մասի վրայ՝ հետեւալ կերպով:
3 1/2 մասը կը յատկացնէ իր թոռներուն:
40 մասը՝ Հայաստանի մէջ գիշերթիկ վարժարանի մը կառուցման:
5 մասը՝ Ս. Երուսաղեմի հայոց վանքին:
5 մասը՝ Կ. Պոլիս Աղզ. Հիւանդանոցին:
3 1/2 մասը՝ կեանքով Ս. Կարապետի վանք:
10 մասը՝ իւր անցած ազգականներուն, իսկ անոնք ալ մեծին դարձեալ ազգին:

Սոյն եօթը կտոր կարուածներուն տարեւորական հասոյթն էր մօտաւորապէս 3,000 եզրպատական ոսկի:

Ահա այս պատճէն ի ձեռին Իզմիրեան սրբազան վերաբերեալ կը գիմէ ոտական հիւպատոսարանը. հիւպատոսը կը խոստովանի թէ արդարև յեճոյ տեսնուած է կտակին մէջ այդպիսի տրամադրութիւն մը, ուստի հիւպատոսը այս առթիւ կը պատասխանէ թէ՛ պէտք էր խնդրել զատարանի ձեռնհասութեան ենթակել, և եթէ հայոց օրինական հանգամանքները հաստատուին՝ կտակին գործադրութիւնը կարելի պիտի ըլլար. սրբազանը ուղեց որ այս պատասխանը գրաւորապէս հաղորդուի իրեն, առ որ հիւպատոսը գիտել կուտայ թէ կառավարութեան այս մասին իրեն գրաւոր հարցում ուղղուել են,

որ գրաւոր պատասխան տայ. Իւրիւրեան այդ հարցումը ուղղել կուտայ հիւպատոսին և անոր գրաւոր պատասխանը կ'ուտանայ:

Ընթերցողը գուշակած է անշուշտ որ գործի այս ընթացքին մէջ ուրիշ մը մատը կ'զգացուէր. այդ ուրիշը նոյն իսկ հանդուցելոյն որդին Պողոս պէյն էր որ կը զբաղակամակը հօրը կտակը գործադրել և ամէն դժուարութիւն կը յարուցանէր անոր դէմ: Յիշեալը քանիցս Մատթէոս սրբազանին ալ զիմեց և ապօրինի միջոցներով ուղեց համբարաշուքի մը գոյացնել. Իզմիրեան ամէն անգամ միշտ միևնոյն բանը պահաջեց — հօրը կտակին գործադրութիւնը:

Այս միջոցին սրբազանը տեղւոյն ամենէն ձեռնհաս փաստաբանները ի ժողով գումարած, կտակին վերաբերեալ ամէն պաշտօնական գրութիւններն անոնց յանձնած և ինչորոշ էր սր գործին մանրամասնութիւններն լաւ մը ուսումնասիրելով իրեն տեղեկագիր մը մատուցանեմ թէ զատը, օրինակաւ սեւակէտով, կրնայ պաշտպանուիլ և ի նպատակ ազգին յաջողութիւնը ապահովուած է. փաստաբանաց յանձնախումբը, յետ մանրակրկիտ քննութեան, իր տեղեկագիրը մատուց յորում կը յայտարարէ թէ դասը պաշտպանելի է ի նպատակ նախընտրելի ապահովում: Եւ այնպէս ալ զլուս հանեց:

(Խորհրդ. Նար-Պէյն այցելութիւնը յեզրագրում) Ողբացեալ խորհրդ. Նար-Պէյն այցելութիւնը և իր բարոյական ամբողջութիւնը մը ստացէս նկարագրած է Տ. Նազարէթ Աղազարմ 1889 Յունիսի 27ին «Արևիկ»-ի ուղղած մէկ թղթակցութեանը մէջ:

Կարգաւոր ազգային լրագրաց մէջ թէ Ս. Երուսաղեմի Ամեն. Տ. Պատրիարք Հօր Կեդր. Պատկ. Կրօնական Ժողովոյ կողմէ ուղեկցող պատգամաւորութեան անդամք Գեր. Տ. Խորհրդ. Արքեպիսկոպոս Նար-Պէյնի և Արթ. Յակոբ վարդապետ Աշոտ, ընկերակցութեամբ Արևիկէի մեծարոյ թըղթակից Տիգրան Լեֆէտի Արքիեպիսկոպիտի հանձնեց այցելութիւն մը տալ Եզրագրումի մայրաքաղաքին, զահիւրեանակ ազգայինըս ցանց ցնծութեամբ:

Արժանաւոր ընդունելութիւն մ'ընելու համար այս պատուական այցելութեանը փութոյ պնդութեամբ յառաջ տարուեցան հին և նոր առաջնորդարանաց ի նորոյ վայելչապէս կահաւորման գործն և կատարուեցան այլ ամեն պատրաստութիւններն, որք կարեւոր էին առ այս:

Ն. Վ. Պողոս պէյ Աշըգեանէ յունիս 19 երկուշաբթի օրն առ Գեր. Ս. Առաջնորդն ուղղեալ հեռագիր մը կը ծանուցանէր թէ այս քան անհամբերութեամբ սպասուած այս հիւրերն յաջող երեքշաբթի օրն, երէկ, ժամն երոպ. 8ին պիտի ժամանեն ի կայարան երկաթուղոյ քաղաքին:

Նշանակեալ պահուն փութացած էին ի նոյն կայարան Արթ. Տ. Կարապետ և բարեշնորհ Տ. Մամբրէ քահանայք, Պատ. Բազարեան Ժողովոյ համայն անդամք և իրք 100 մեծարոյ ազգայիններ. ի եկաւ բերկրութիւնն ամենուն, երբ կատարուեց զարար անկողով պատուական այցելութեանը զանազան ողջունեցին Գահիրէի հայութեան ներկայացուցիչներն և ընդունեցին անոնցմէ շնորհատուութիւններ և բարի գալստեան մաղթանքներ:

Քանի մը վայրկեան հանգիստէն յետոյ ի սրահի սպաման, պատրաստական հիւրերուն, որոնց համարպատրաստուած էր շքեղ

շաւիսօ մը, առաջնորդուեցան հին առաջնորդարանն, ոյր արտաքին գրան առնէ զիրար ողջագործեցին Եզրագրումը սրբազան առաջնորդն և Պէշիկթաշի մեծահմարտ քարոզիչն և Արթ. Յակոբ վարդապետ Աշոտ. քիչ յետոյ կը հասնէր և Տիգրան Լեֆէտի Արքիեպիտ ընդ Վսեմ. Պողոս պէյ Աշըգեանի, որ յատկապէս ուղեկցած էր մեր պատուական հիւրերուն Աշըգեանգրիայէն ի Գահիրէ:

Հիւրերու ընկալութեան յատկապէս նոր առաջնորդարանն:

Յաջորդ չորեքշաբթի օրն սկսան այցելութիւնը ի զանազան նշանաւոր անձնաւորութիւնն և տեղին Գահիրէի և շրջակայից: Գեր. Առաջնորդ Ս. Հայրը մասնաւոր պատիւ մ'ուղեկով ընել հիւրերուն, ընկերացաւ անոնց ամեն այցելութեանց: Նոքա ընդունած են հետզհետէ Գահիրէի պաշտօնական մարմնաց, ժողովրդեան զանազան զասակարգերու այցելութիւններն, ինչպէս նաև Ն. Վսեմութիւն Տիգրան փաշայի փոխարքայ այցելութիւնը: Նար-Պէյ Սրբազան և ընկերք սիրալիր և ընդհանուր ընդունելութիւն մը վայելեցին, ցորչափ հաճեցան մնալ առաջի գահիրէ:

Պատուական հիւրերը նոյն չորեքշաբթի օրը գնացին Ազգ. գերեզմանատունն ու Ս. Մինասի մատուն. այցելեցին Վսեմ. Տիգրան փաշա Ապրօի, որ խորհրդական է արտաքին գործոց նախարարութեան և տաննապետ Ազգ. Գաւառ. Ընդհ. Ժողովոյ, Վսեմ. Յակոբ փաշա Արթիւնի, որ է անգամ երկաթուղոյ վարչութեան և Մեծ. Պողոս Լեֆէտի Կարապետեանի, որ ծանօթ է ազգին իր բարեբարութիւններով. այցելեցին և խորհրդական Ազգ. վարժարանն, ուր փոքրիկ քննութիւն մը կատարեց Նար-Պէյ Սրբազան և գոհ մնաց բարձրագոյն կարգաց երկսեռ ուսանողաց հայերէն աշխարհարար և ֆրանսերէն օրինակէն զերկաթուղի մէջ ցոյց տուած յառաջադիմութիւնն: Ն. Սրբազանութիւն աչքէ անցուց և վարժարանի արձանագրութիւններն և ստացաւ կարեւոր տեղեկութիւններն, և անոնցմէ տեսաւ թէ վարժարանի յառաջդիմութեան կառքն վարելու համար ծանրածանր դժուարութեանց կը բաղի պաշտօններութիւնը, զոր հաճեցաւ խորհուրտել քաջալերական բարիք և օրհնութեամբ:

Հինգշաբթի օրն այցելեց ի սիւնահարհրչակ բրգուն Կիզիլի և երկնային սեղանի Հրբաւէր ընդ Գեր. Ս. Առաջնորդին յազարանի Ն. Վսեմ. Տիգրան փաշայի:

Ուրբաթ այցելութիւն ի Մամբարա, ուր է Ս. Առաւածածնի ծանն որոյ բունին յեցաւ, կ'ըսէ ասանկութիւնն Ս. Կոյս Մարիամ, երբ Հերովդէսի հարսանքէն փախըստական իր որդւոյն աշխարհի փրկիչի և ինամակալի հետ կ'ապաստանէր փարաւոններու երկիրն. ըստ վկայութեան ձեռնհաս բուսաբաններու, սոյն ծագին արմատէն ի վերջոյ ընծիւրած արգի բունն ունի 1,300 տարուան հնութիւն. նոյն օր Մամբարայէ վերադարձն յետոյ այցելութիւն նաև Մեծ. Յովհաննէս Լեֆէտի Նախնախնի պատնապետ ֆաղաքական Ժողովոյ, և ապա ջուրի և սահ գործարաններուն:

Շաբաթ վերստին այցելութիւն ի բրգունն ընդ Պողոս պէյ Աշըգեանի և կարապետ Լեֆ. Լազեանի. այս անգամ մեծահաշակ լուսաշնորհ Գեորգ Լեֆէտի Ապտուլլահ այցելու խումբին պատկերը կը հանէ ի ստորոտ նոյն հոյակերտ շինուածոց:

ՔԱՐՏԱՆԻ ԽՈՐՀԻՆ ՆԱՐ-ՊԵՅԻ

Կիւրակի առաւօտ Նար-Պէյ Սրբազան լուս հրաւերի Գեր. Առաջնորդ Ս. Հօր և ըստ փափաքանաց ժողովրդեան Ս. Պատարագ կը մատուցանէ ի Ս. Առաւածածնի եկեղեցոյ ի ներկայութեան խումբ քաղաքութեան յորս կը նշմարուին բարձրատիւ ծան ազգայինք՝ տարբեր զանաւորութիւնէ: Ն.

Սրբազանութիւն խոսեցաւ պերճ քարոզ մը, ոյր կարեւոր մէկ մասին ամբողջութիւն է. — «Եզրագրումով պատուական Հայ եզրայինք, բարեբաղութիւն Զեյ համար, և սր ունիք այնպիսի Առաջնորդ մը, որ մին «է ի նշանաւորագունից այն կարկուտաց, և որոնցմէ լաւագոյնքը չ'ունի ազգը. Նորին «վսեմութիւնը Նուպար, Տիգրան և Պողոս «հիշալք, ողջամիտ ժողովուրդն, համայն պաշտօնական մարմինք Գահիրէի և Աշըգեանայինքը քաջ գնահատած են քաղաքային «Առաջնորդ Գեր. Իզմիրեան Սրբազանի բարձրարժանիքն, և ես ջերմապէս հրաւեր կը «կը կարգամ վերջին ծանօթ ինչորոշ պատարակ բունկով դժուարութիւններ յարուցանելու հետամուտ մեր եղբարց, որ մերկաւորով ամէն անձնական հաշիւ ունկատուած «ծանչան իրենց առաջնորդին յարգն և ժողովրդեան մեծամասնութեան հետ շրջապատ «անն զՆ. Սրբազանութիւն ի համբարաշխ գործակցութիւն, յայտարարելով իրեն Ատեմ «նապետ Կեդր. Կրօնական Ժողովոյ թէ «Գերապատի Ս. Առաջնորդը կատարեալ «պէս իրաւունք ունէր նոյն ինչորոշ մէջ «վարուելու այնպէս, ինչպէս վարուած է «արդէն»:

Ժամերգութեան աւարտուէն յետոյ ժողովուրդը խումբ խումբ ներկայանալով պատարագիչ Սրբազանին յառաջնորդարանն, իր շնորհակալութիւնն ու յարգանքները մատուց Ն. Գերապատութեան. երկուստեք արտայայտուեցան խանդավառ զգացումներ ու իղձեր:

Նոյն օր մեր պատուական հիւրերն այցելեցին բերդին և մեծապատիւ Բարթիկ Լեֆ. Նազարեանեանի և Տիգրան Լեֆէտի Միլիտիանի, զանձապետի և անդամաց ֆաղաքական Ժողովոյ, և Գարբիէ Լեֆէտի Միլիտիանի: Երկնային Ն. Վսեմութիւն Տիգրան փաշա վերստին ընթաց հրաւերած էր Գեր. Խորհրդ. Ս. Մատթէոս Սրբազանները, մինչ անպիսի քաղաքի հայ երկուստեք խումբ մը էօղպէրէի զեղազուարճ պարտէզին մէջ ուղեւոր մը կուտար ի պատիւ Արևիկէի լրագրոյ և նորս համակրելի թղթակից Տիգրան Լեֆէտի Արքիեպիսկոպիտի, սեղան, զոր հաճած էր ըստ հրաւերանաց պատուել Արթ. Յակոբ վարդապետ Աշոտ: Սեղանը կ'սկսէր երկնային ցամաքի միջ ըստ Եւր. ընդ նախագահութեամբ Ն. Արժանապատութեան. ի տանդամբ առաջնորդուած բաժաններն ևս բան զեւ կ'ոգեւորէին զներկայս և Մեծ. Լուս Լեֆէտի Գե. Բարթիկեան ճարտար կերպով ի վեր կը հանէր և կը հոչակէր այն օգտակար ծառայութիւններն, զորս Արևիկէի մատուցած է Հայ մամուլին: Ժամը 11ն անցած էր արգէն և երկուստեք խումբը դժուարաւ կ'ուղեր բաժնուիլ իրարմէ և ամեն ոք իր հետ կը տանէր այդ քաղաքահաճ ժամերու քաղցր և անշնչելի յիշատակը:

Երէկ առաւօտ ժամ 7 1/2ին մեր պատուական հիւրերը մեկնեցան քաղաքէս: Գեր. Առաջնորդ Ս. Հայրն: երկու բարեշնորհ քահանայք, ֆաղաքական ժողովոյ անդամք և նոյն պէս արժանաւոր ազգայինք ընկերացան նոցա մինչև ի Գարբ-Ար. յեղերս նեղոսի, որու մակերեսութիւն վրայ կը տատանէր շոգեմակալ մը, յարում կ'սպասէր Ն. Վսեմ. Պողոս փաշա Նուպար:

Քաճանման տեսարանը սրտայոյզ էր. Նար-Պէյ և Իզմիրեան արքեպիսկոպոսք համբուրեցին զիրար. ներկայք մի առ մի համբուրեցին Նար-Պէյ սրբազան և Յակոբ վարդապետի աշերն և անոնց օրհնութիւնը ինչորոշին. փոխանակուեցան «երթայք և մնայք բարեալ» սիրալիր մաղթանքներ Ն. Սրբազանութեան, Ն. Արժանապատութեան և Տիգրան Լեֆէտի Արքիեպիսկոպիտի հետ, որք ընկերակցութեամբ Վսեմ. Պողոս փաշայի և Պողոս պէյ Աշըգեանի մտան ի շոգեմակալին, որ շրջան մ'ընելով սկսաւ թոյլ դէպ ի հիւսիս Նեղոսի վրայ վրայ ալիքները փոքրազգ պատեղով:

Գեր. Նար-Պէյ սրբազան և պատուական ընկերք իւր գնացին ուղղակի ի խաթապատ տեսնելու այն գործարաններ ու շոգեմակալներ, որովք Ն. Վսեմութիւն Պողոս փաշայի նախագահութեան տակ գանուող սոսոցման ընկերութիւնը ջուր կը մատակարարէ Պէշիկթաշի գաւառին արտօրից. անտի Նոյնին Վսեմութեանց Պողոս պէյ Աշըգեանի և Արբանամ պէյ Բարթոլի ազարակներն, զորս յԱպուհուսմուս այցելելէ յետոյ պիտի գնան յԱղբաբանդիւս, ուստի և ի Պոլիս:

ՊԵՐՊԵՐԵՆՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՅՈՐԵԼԵԱՆԸ

Ինչպէս որ «Նար-Օր»-ի 87րդ. թուոյն մէջ Կ. Պոլսէն հասած թղթակցութեան մը առթիւ ժողովրդեան ուշադրութիւնը գարձնելու ուղած էինք Օրմանեան Ս. Պատրիարքին կնիքակիր վրայ որ ի վեր կը հանէր թէթէոս Էֆէնտի Պէյրպէրեանի գրապատական տաղանդը և ստացչական ապագրէզին մէջ ցոյց տուած կրթութիւնը և արդիւնաւոր գործունէութիւնը և կը հրաւիրէր բոլոր կրթասէր ազգայիններուն Պէրպէրեան վարժարանի 23 ամեայ յորեւեաններն ստիճի, մտանկեցելու գրամական նը. ուր արքեպիսկոպիտն որ միջոց պիտի ընծայէ ընդարձակել ազգօգուտ հաստատութիւն մը և ապահովել կարեւոր ձեռնարկ մը, այսօր ալ ուրախութեամբ կը գրենք թէ այդ յորեւեանին առթիւ կազմուած է քաղաքիս մէջ 8 անձերէ բաղկացեալ յանձնաժողով մը որ իր առաջին նիստն ալ գումարած է ամսոց 3ը երկնային Տր. Մախսեանի բնակարանին մէջ և ուր ընտրուած են զիւսանի անդամներն հետեւեալ կերպով.

- Մեծ. Տիգր. Զ. Պէրպէրեան Ատեմապետ
- Յ. Սէթեան Ատեմազպիր
- Յ. Մեքընեան Գանձապետ
- Գ. Սէլվաճեան
- Գ. Սիլուսեան
- Ն. Աղազարմ
- Յ. Օհանեան
- Պ. Մախսեան

Կը յուսանք թէ կրթասէր ազգայինք պիտի փութան պատասխանել համակիր աշակցութեան մը յիշեալ յանձնաժողովին ջանքերուն: Վերջին պահուն կը տեղեկանանք թէ Ս. Պատրիարք հօր կողմանէ ալ յանձնարարութիւն եղած է Եզրագրումի Առաջնորդ Գեր. Այվազեան Սրբազանին, զիւր մը տարու համար այդ նըպատակին:

ԱՍՏՐԱՆ-ԲՆԹԵՐՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Գործ. Վարչութիւնն կուղայ ինչորոշ այն յարգելի ազգայիններէն որոնց քով Ընկերութեան պատկանած գրքեր կը գտնուին՝ որ հաճին զանոնք եւ վերադարձնել, քանի որ Ընթերցատան լայնութիւն ի վեր անոնց պէտքը զգալի կը գտնուի ամէն օր, ընթերցատանը յանձնարարութեամբ սպասանչու մեկտուէր բերուին:

Վարչութիւնն այս առթիւ կը սիրէ յուսուլ թէ պիտի գտնուին նոյնպէս ազգայիններ, որ ազնուութիւնը ունենան մէկ կամ աւելի տրամադրելի գրքերու նուիրատուութեամբ ձօնացնել Ընթերցատան մատենադարանը, աղքատիկ ու համեստ իր նախաքայլերուն նման:

Վարչութիւնն անգամ մ'իս անգամ... մակրութեան կը հրաւիրէ ամէն անոնք որոնք այս կամ այն մտածումով...

Աւելորդ է ըսել թէ՛ ընկերութիւն մը գործուն ձեռքերով, գործնական համակարանով ու քաջալերութիւնով...

Գործ. Վարչութեան Ազնաւորակիր Ստեփանակերտ Ա. ՉԱՐՔՆԱՆ Ս. ՕՏԱՊԱՇԵԱՆ 4 Յունիս 1904 Գահիրէ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ. — Օտմ. զինգանատան խորհրդակալը, առաջին, երկրորդ և երրորդ քարտուղարները, ինչպէս նաև փարիզի օտմ. ընդհ. հիւպատոսը Ելլարդ լուր տուած են թէ ստիպուած պիտի ըլլան Երիտասարդ թուրքերուն յարելու, եթէ իրենց ամա- կանները կանոնադրապէս չվճարուին:

—Ռուսիա. — Յեղափոխական խրատու մի լուրերը անպակաս են: Փէթրոպոլիսի մարտական մէջ Լոնտոնէն եկած երկու ծր- բաններ բնուեցան, որոնք ուժանակ կը պարտակէին: Մայրաքաղաքին մէջ յայտարարագիր մը ցրուած է որ կ'իմացնէ թէ անձնասպան եղած են 12 ուսանողներ, որոնք Սիպիւր զինուորական ծառայութեան դատապարտուած էին:

—Կ. Պոլիս. — Հայկական կոտորածներու ատեն իր հպատակաց կրած փաստներուն համար 100,000 տղար յաջողեցաւ անել Ֆրանսական կառավարութիւնը Բ. Դոնէն: Օտար պետութեանց զեպսանք իրենց խնդակցութիւնը յայտնեցին Ֆրանսական զեպսանքին իր ունեցած այս յաջողութեանը համար:

—Անգլիա. — Առտարական Սենեկին Ամերիկեան հիւրերուն տուած ինննյոթին մէջ բարեկամական փոխադարձ շեղմ զգացումներ արտայայտուեցան Ամերիկայի ու Անգլիոյ միջև: «Սէյնթ Ճէյմս կաղէթ» կը յանձնարարէ այս առթիւ որ Բիքտոնական ամէն հասարակաց շէնք Ամերիկեան գրօշներով զարդարուի Յունիս 4ին: «Կլոսպը» միայն չընդունիր թէ «վաճառականութիւնը մեծագոյն խաղաղարարն է աշխարհի», ու կը կարծէ թէ առևտրական մրցումը ու նոր շուկաներ պահանջուող բազմաթիւ կրնան բերդի նաւոր ըլլալ գիտարութիւններ ծնունդու մէջ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

«Բիւթիլի» գործակալութեան Բապուլէ ուղղուած լուրերը, որոնք անշուշտ շատ մը փոփոխութիւններ կրած ըլլալու են Սաւախոնէն, մեծ յուզում պատճառուած են Անգլիոյ և մանաւանդ Արևելեան Հնդկաստանի մէջ:

Արևելեան «յլևս թէ գէպրեր, որոնք կրնան ծանր հետևանքներ ունենալ, կը պատրաստուին կեդրոնական Ասիոյ մէջ:

Աֆղանիստանի Էմիրը շարք մը ամբողջներ շինել տուած է, արգի դրութեամբ ու նոր ռազմավարքով, ինչպէս նաև երկրակալան ամրակուռ հր- նոյններ որոնք պիտի գիւրայնեն գիշեր ժամանակ շրջակայ բանակաւորները հետազօտելու:

Տարբեր աղբիւրներէ նոյնպէս կիմացուի թէ, հակառակ Անգլիոյ հետ կնքած պայմանագրութիւններուն, Էմիրը խել մը խոշոր թիւղանօթներ ապրապարծ է Ֆուսուական և Գերմանական վաճառատուններու Էմիրի գործարանները կաշխատին անպադար. դործարան մը, որ գեւա վերջերս բացուած է, անմուխ վառօդ կարտագրէ: Չը գիտցուիր սակայն թէ ինչ է Էմիրին նպատակը:

«Տայ Ինֆոմատիօն» լրագիրը արժանաւոր կը նկատէ լուրը որուն համեմատ Ս. Փէթրոպոլիսի նախարարութիւնը զեկուցած է Յոյն կառավարութեան թէ, Չարը կը փափաքի անմիջական լուծում մը տրուած տեսնել Պալատեան այլևայլ խնդիրներուն, մանաւորապէս Մակեդոնականին, ինչպէս նաև կրիտական խնդրին:

Երբ անդարձութիւնը վերջնականապէս տիրէ այս նահանգներուն մէջ, այն ատեն Չարը, ինչ մ'ալ անցնալէն փորձառու, պիտի առաջարկէ եւրոպական աշխարհի ինններու վեհաժողով մը գումարել, առկալս մնացած բոլոր փշուտ խնդիրները կարգադրելու համար:

Հայկականոն ալ ըսել կուզէ արդեօք...:

Թուանվալի սյտեբրազմիւն վրայ հրատարակուած տեղեկութիւններէն կը տեսնուի որ Բափի գաղթավայրը 1 հազարէն 2 հազար Պօէյներ կան զէնքի տակ պատեբրազմի ծախսերը մտաւորապէս 1,250,000 անգլիական սսկի եղած են մէն մի շարքի մ:

Լոնտոնի պատեբրազմական նախարարութեան կողմէ հրատարակուած կորուստի ցուցակէն կը հետեցուի որ ընդհանրապէս կը շարունակուին ամէն կողմ:

«Կաղէթ» ուր Բօլօնէրը կը կարծէ որ Գերմանիոյ կայսրը տրամադիր ըլլալու չէ Գրիւզիէի հետ տեսակցելու համար:

ԿՈՉ ՄԸ ՔԻՒՐՏԵՐՈՒՆ

Քիւրտ Պետրեան փաշայի տղաներէն մին՝ Ապտուրբահման պէյ՝ որ ատենէ մը ի վեր Քիւրտիստան անունին տակ թերթ մը կը հրատարակէ Երեզայի մէջ, կոչ մը կ'ընէ իր հայրենակիցներուն որուն կարևոր հաստատմանը Բրօ-Արմէնիան անելով կը ծանօթացնենք մեր ընթերցողներուն:

«Դուք, Քիւրտեր, ինքզինքնիդ անպատուեցիք ու սուլթան Համիտէն առաջնորդուած ձեր կործանումին աշխատեցաք, սիրաշահուած շքանշաններով զոր շունքը իսկ չեն զիջանիւր ընդունելու: Դուք զոհեցիք հազարաւոր հոգիներ և հպատակեցաք աւազակ պետերու:

«Սուլթանը յանուն խալիֆային մեծամեծ վայրագութիւններ և ամենավատ մարդասպանութիւններ կը գործէ: Չենէ զատ ամէն մարդ գիտէ ստիպալ:

«Խալիֆա կամ ինչ կ'ուզէ թող կոչէ ինչզինքը. ստիպալ պատճառ մը չէ որ գուր անարժան պետերու ստրուկները ըլլաք: Մինչ այնքան պզտիկ ազգեր յաջողած են սրտոտ ջանքերով իրենց յատուկ կառավարութիւն մը հաստատել, դուք ուրիշ բան չէք ընել եթէ ոչ զիրար յօշոտել և այսպէս ազատ ապարկը կուտաք սուլթանին բունակարութեանը: Դուք զոհեցիք անմեղ հայեր ու մինչև իսկ մանուկներ և այս կերպով քաղաքակիրթ մարդկութեան առջև դահիճներու տխրոսին արժանացաք: Կը վայելէ ձեզ այնպէս խարուիլ սուլթանին սուտերուն:

«Այսքան անմեղ հայեր ջարդել ինչզինքնիդ, ձեր հայրենիքը և ձեր ընտանեկան յարեբը կործանել ըսել չէ: Վալինբը, գայմազմները որ կողոպտեի զիւրեցին ձեզի, բան մը ձգեցին ձեզ համար: Անոնք ձեր ձեռքէն չի խլեցին ձեր ունեցածներն ալ:

«Քնական կարիքները ձեզ կը ստիպեն սիրով ապրել Հայերու հետ, ինչպէս որ կընէիք հին ժամանակները: Ապտիլ Համիտէն խարուելով բարեկամական ամէն կապ խրդեցիք, այս բոլորին հետեանք պիտի կրէք այս և հանդերձաւ աշխարհին մէջ:

«Քաւական են վայրագութիւններ ու կողոպտանքեր որ գործեցիք Ապտիլ Համիտի թեղաղութեամբը: Վերջապէս փառքի և երջանկութեան ճամբայ մը բացէք ձեզ համար:

«Ասոր համար է որ կաշխատիմ ես հոս Քիւրտիստան անուն թերթիս միջոցաւ, և որ մը թերեւս պիտի գամ ձեր մէջը ձեզի հետ աշխատելու համար:

«Նիզակակցեցէք Հայերուն և Աստուած ձեզի հետ պիտի ըլլայ»:

ՀԱՅՈՑ ԱՅԳԵԿՈՒԹԸ ՅԱՄԵՐԻԿԱՅ

Բ.

Որժանտունները կը տնկուին առ հասարակ իրարու զուգահեռական շարքերով իրարմէ տասնակ ոտք հեռաւորութեամբ (տասով տասը), որ ըսել է 435 որժանտունի իւրաքանչիւր էյքթի. երբեմն կը տնկուին նաև ութով տասը ոտք հեռաւորութեամբ (իւրաքանչիւր էյքթի 544 որժանտունի), և կամ տասով տասներկու ոտք հեռաւորութեամբ (իւրաքանչիւր էյքթի 363 որժանտունի): Կամ որժանտունիկն յօտուած ուտքեր (ճիւղեր) մէկ կամ մէկ ու կէս ոտք երկայնութեամբ, կը կտրեն և վերայիշալ եղանակով կը տնկեն, և կամ նոյն ճիւղերը տարի մը հողի մէջ պահելէ և արմատացրնելէ ետքը իբրև այդի կը տնկեն: Անուշտ այս վերջին կերպը աւելի ապահով ըլլալով, աւելի գործածական է: Այդի մը առ հասարակ երրորդ տարին իր ծախքը հանելու չափ բերք կուտայ:

Որովհետև Սէն Ողին հովիտին մէջ ձըմեղ մեղմ է և ձիւն չի գար, այգեգործները Բուշմարին կրնան սկսիլ իրենց գործերը: Առաջին գործը յօտեն է (պուտամա ընել): Չամիչ արտադրող որժանտուններուն բունքը ընդհանրապէս թող չեն տրուիր որ գետնէն մէկ ոտքէն աւելի բարձրանան. Այդ բարձրութեան իրենց անկանոն ճիւղերը ամէն կ'երկարեն: Անկուտ չամիչ արտադրող տե-

սակները ինչպէս Սուլթանա և Թամար—սիտալէս կաշուածները, այս կանոնին բացառութիւն են. այնպէս որ տանց որժանտունիները չորս հինգ ոտք բարձրութեամբ ցիցերու վրայ կ'անուրին: Յօտենու տանն ճիւղերը որժանտունիին բունին վրայէն սրչափ կարելի է խորունկ կը կտրուին, միայն իւրաքանչիւր որժանտունի վրայ բանի — եթէ կամ ութը հաս — երեք չորս մաս բարձրէն կը կտրուին, որպէս զի անոնցմէ նոր ծիլեր կամ ճիւղեր բողբոջին:

Յօտենի ետքը յաջորդ գործը ջրերն է եթէ ձմեռուան անձրևները բուական չսեպուին բերքին կանոնաւոր անձան համար: Սէն Ողին հովիտին մէջ անձրևի տարեկան տեղացումն է միջին հաշուով 10 մաս: Երբ տարին երաշտ ըլլայ և անձրևի բանակութիւնը 8 մասը չանցնի, այգեգործը բնականաբար ջրերու պէտք կ'ունենայ որպէսզի բերքին անձան համար պէտք եղած խոնաւութեան պակասը լեցնէ: Այդի մը առ հասարակ ուրիշ պատուի ծոռաստաններէ շատ աւելի մշակութեան չի կարօտիր:

Սէն Ողին հովիտին մէջ որժները կը ըսկսին ծիլ Մարտի վերջերս կամ Ապրիլի սկիզբները, և Մայիսին ամբողջովին կանաչացած և ուռածացած կ'ըլլան: Այս միջոցին՝ երբ որժանտունիին ճիւղերը դեռ շատ մատուշ կըլլան, եթէ զիշերուան օդը սառելու աստիճան պարզու ըլլայ, խիստ մեծ փասս յառաջ կուգայ, հող չէ թէ օդին այսպէս յանկարծական պարզելը շատ կարճատև ալ ըլլայ: Որժանտունիին փափուկ ծիլերը պաղէն զարնուելով, յաջորդ օրուան արևին ճառագայթներուն տակ կը թառամին և կը չորանան: Սառն զարնուած այգին նորէն կը ծիլ, կը ծաղկի և պտուղ կուտայ, բայց բերքը անպատճառ թէ թէ կ'ըլլայ թէ տեսակով ստորին: Հաշիւ եղած է որ 1899ին մեծ սառը, որ Մայիսի սկիզբները տեղի ունեցաւ, փասս յառաջ բերաւ իբր 1,000 քաղոտ որ է գրեթէ ամբողջ չամիչի բերքին մէկ չորրորդը: Սա ալ դիտուած է որ սառը այս վերջին տարիներս աւելի տեղի կ'ունենայ բան աւել տաքս, տասնը հինգ տարի առաջ: Այս երեւոյթը ընդհանրապէս կը վերադրուի ոռոգման պատճառաւ հողին մէջ խոնաւութեան անձան:

Քալիֆորնիոյ արտադրած քանի մը հարիւր տեսակ պատուական խաղողներուն մէջէն միայն թիւր չամիչի յարմար են: Մըսթի կամ Մըսթիթի կոչուած խաղողը, որուն բոյսը Սպանիայէն և Ալեքիայէն բերուած էր հոս, ամենէն ընտիր տեսակ չամիչը կուտայ. վասն որոյ ներկայս այգիներուն մէծագոյն մասը այս տեսակէն է: Մարական կոչուած խաղողը, որուն բոյսն ալ Սպանիոյ համանուն գաւառէն բերուեցաւ, ընդհանրապէս իբրև խաղող (կանաչ) արտաձուելու համար կը մշակուի: Արեւելեան նահանգներուն մէջ ծախուած Քալիֆորնիոյ կանաչ խաղողը ընդհանրապէս այս տեսակէն է: Բայց կրնայ չորրորդ չամիչ ալ շինուիլ. սակայն տեսակը ստորին կ'ըլլայ: Թէ՛ Մըսթիթի թէ՛ Մարական չամիչները խոշոր հատ ունին, բայց կուտու են: Երկու տեսակ չամիչ կայ որոնք անկուտ են. Սուլթանա կոչուածը, և Թամար—սիտալէս կոչուածը, որուն բոյսը իզմիրէն բերուած է ուր Սուլթանիէ անունով ծանօթ է:

Կոյնակ

Le Gérant J. MUNIER

Տպաւ. «Միւրիւն», — Թ. Ս. Փափագեանի